

Հասարակութեան քաղաքին որ ուրիշ երէց-  
փոխանի մը ընտրութիւնն ընեն, եւ առա-  
ջարկեն Ատենիս իհաստատութիւն:

— Գրիգորուպօլսոյ Հոգեւոր Կառավարու-  
թիւնը խնդրած էր Ատենէս որ Գրիգորու-  
պօլիս գտնուած եկեղեցային պանդոկն ու  
վեց կրպակները վեցամեայ ժամանակաւ վար-  
ձու տրուի Պարոն Դուկասու Քասապեան: Ա-  
ռաջնորդական Ատենս յետ պատշաճաւոր  
քննութեանց՝ հաստատեց Հոգեւոր Կառավա-  
րութեան վերոյիշեալ առաջարկութիւնը:

— Նախիջեւանու Թօփտի գեղջ Հասարա-  
կութիւնը միաբան հաւանութեամբ խնդրած  
էին որ վերստին հաստատուի երէցփոխա-  
նութեան պաշտօնին մէջ Պարոն Մանուէլն  
Թորոսեան, որոյ երեք տարուան ժամանակը  
լցուած էր: Առաջնորդական Ատենս ըստ  
1026 յօդուածոյ Բարձրագոյն կարգադրու-  
թեանն՝ կատարեց վերոյիշեալ հասարակու-  
թեան խնդիրը, հաստատելով այլ եւս ժա-  
մանակաւ զՊարոն Մանուէլն Թորոսեան ի  
պաշտաման անդ իւրում:

Ապրիլի 13. — Առաջնորդական Ատենս  
հրաման տուաւ նախիջեւանու Հոգեւորական  
Կառավարութեանը որ եկեղեցական մոմա-  
վաճառութեան կապալառութիւնը տայ ցան-  
կացողաց եռամեայ ժամանակաւ, փոխանակ

Պ. Աստուածատրոյ Աստուածատրեան, որոյ  
պայմանեալ եռամեայ ժամանակը լրացած  
էր արդէն:

Ապրիլի 27. — Առաջնորդական Ատենս  
ըստ խնդրանաց Հոգեւորական Կառավարու-  
թեանն Քիշնեւի՝ թոյլ տուաւ որ խախտեալ  
եկեղեցոյն կարկառմանն համար բարեպաշտ  
ժողովրդականք ողորմութիւն ժողովեն ժա-  
պաւինեալ տետրակի մէջ նշանակելով իրենց  
տուած տուրքը իփառս տանն Աստուծոյ:

— Ըստ հաղորդագրութեան Առաջնորդա-  
կան Ատենին Երեւանայ, որով կճանուցանէր  
զի վարդանլի գեղջ Յարութիւն քահանայն  
Զոհրաբեանց առած միամեայ անցագրին ժա-  
մանակէն աւելի ուշացեր էր դառնալու իւր  
ծուխը, եւ ուրիշ տեղուանք կքալէր ժողո-  
վարարութեամբ. Ատենս հրաման ըրաւ  
Հոգեւորական Կառավարութեանց եւ քահա-  
նայից Վիճակիս որ վերոյիշեալ քահանայն  
եթէ Վիճակիս մէջ յայնուի՝ օրինաց սահ-  
մանածը կատարեն:

— Հին Խրիմու Խաչատուր քահանայն Սա-  
մուէլեանց գտնուելով իվիճակի ազքատու-  
թեան, Ատենս հրաման ըրաւ որ յարդեանց  
անտի վանաց Ս. Խաչին ամիս յամսոյ տրուի  
թոշակ վերոյիշեալ քահանային 10 բուպլի,  
կամ թէ տարին 120 բ. արծաթի:

ԵՐԿՈՒ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆՔ.

Ինչո՞ւ համար մարդս իւր ընկերը միշտ պակասաւոր կտեսնէ, եւ ինքզինքը՝ ոչ.  
— Վասն զի մարդս իւր պակասութիւնը չտեսներ, բայց ուրիշինը կրկին կերպով կտեսնէ:  
Ինչո՞ւ համար մարդս ինքզինք թշուառ կգտնէ եւ զուրիշը իրմէ երջանիկ.  
— Վասն զի մարդս իւր թշուառութիւնը կրկին կտեսնէ, եւ ուրիշինը՝ ոչ:  
Այս երկու պատասխանները ըստ ինքեան իրարու հակառակ կերեւին, բայց եւ այնպէս՝  
երկուսն ալ անփոխելի ճշմարտութիւններ են:

\* \* \*